



1662-1668

17 1234  
4-64











783  
172



4-61  
ԳԱՐՈՅԵԱԿԱՆ  
ՍԿԶԲՈՒԽ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ԹՊԱՐԱՆԻ Յ. ՄԻՒՀԵՎԱՏԻՍԱՆ  
— ԱՅԱ —

ГЛАВА 15

ЧАСТЬ 2

25

17  
4-64


18

# ՀՅՈՒՅՑԵՐԸ

## ԱԿՁԲՈՒՆՔ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ Ս. ՎԵԶԵՆԵԱՆ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

Տ. ՅԱԿՈՎԵԱՅ ԱԶԳԱՍԻՐ

ԱՐՔԵՊԵՍԿՈՊՈՍԻ

Printed in Turkey



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՑՈՎՃԱՆՈՒ ՄՏԻՃԱՆՏՄԵԱՆ

=1851=

12001

9065 Wh



914  
39

# ՅԱՐՈՅԵԿԱՆ



## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՅԵԿԱՆԸ մեր պարտուցը գիտութիւնն է :

Յարոյականը մեղի կը սորվեցընէ ինչ վախճանի համար ստեղծուած ըլլալիս . մեր նպատակին հասնելու համար մեղի դրուած օրէնքները . ան օրէնքներուն զանցառութէն մեղի հետեւելիքը . բարիին ու չարին ընտրութիւնը , և վերջապէս մեր նպատակին հասնելու եղանակը :

Յարոյականին սկզբունքները՝ իշխախտենից հաստատուած են , և յաւիտեան անխախտ պիտի մնան : Յայցնայինք աս սկզբունքները որո՞նք են :

Ամէնէն առաջ գիտնալու ենք որ , Այարդս ինքիրմէ չէ ստեղծուած , արարիչ մը ունի . անկէց ստեղծուած է , ու անոր կամքէն կախուած է :

Երկրորդ՝ Այարդս աս աշխարհիս վրայ մինակ չի կենար , իրեն նմաններուն հետ կ'ընկերանայ . ըսել է որ , ընկերական վիճակ մը ունի :

Վարդուս համար ասկէ երեք տեւ  
սակ պարտք կը ծագի . մէկը առ ած ,  
երկրորդը՝ իր նմաններուն , և երրորդն  
ալ՝ իր անձին : Ասոնք անթերի կատա-  
րելու համար , անոնց ամեն մէկին ինչ  
ըլլալը պէտք է որ մարդս աղէկ մը սոր-  
վի ու հասկընայ : Բարյականին պարտ-  
քերը չի գիտնալը՝ աններելի է . հոս  
սխալիլը ուրիշ բանի մէջ սխալելու չի  
նմանիր : Բարյականին կանոնները՝ մեր  
նպատակին հասնելու միջոցները ըլլա-  
լուն , անոնց մէջ սխալիլը՝ մեզի նպա-  
տակինուս ետ կեցընել է :

Երկու գլխաւոր ճշմարտուի կան՝  
որ բարյական պարտքերը անոնց վրայ  
հաստատուած են . մէյ մը՝ արարիչ մը  
ըլլալը , մէյմ'ալ՝ մեր անմահ հոգի ու-  
նենալը :

## Գ Լ Ո Ւ Խ Ա.

### Գ Ո Յ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ա Ս Տ Ո Ւ Ֆ Ո Յ

Արսրաւ մը ըլլալուն ապացոյցները  
շատ են . աս աշխարհքիս մէջ ամեն բան  
Արտուծոյ էութիւլ կ'իմացընէ : Հաս-  
տատութեան մէջ շարուած մարմիննե-  
րը տեսնելով՝ ի հարկէ պիտի հարցը-  
նենք թէ , ատոնք ինքնիրեննուն մի ե-  
ղան . թէ որ ինքնիրեննուն չեղան նէ ,

ով զանոնք արարչագործեց : Ամեն տեղ,  
ամեն բանի մէջ, աչուընիս ուր դար-  
ձրնենք, կարդ մը կանոն մը կը տես-  
նենք : Ո՞վ է առ կանոնին առ կարդին  
տէրը : Ո՞վ ըստ արեգակին լուսաւոր  
ըլլալ . ով եղանակները սահմանեց : Ո՞վ  
աս աշխարհքս զարդարեց տունկերով  
ու անասուններով . ով հաւուն թոչիլ  
որպեցուց, ձուկերուն լողալ, և չոր-  
քոտանիններուն քալել :

Երկինքն ել կամ վար իջիր, աչքդ  
ուր պտղոցընես, զարմանալի է ակներ  
կը տեսնես . ամեն բան քեզի կուգայ  
կ'ըսէ, — Ես ալ այնչափ անթիւ և ակ-  
ներուն մէջ մէկ էակ մըն եմ — :

Ամեն բան չափուած է, ամեն ըլլ-  
լալիք նախասահմանուած է . ով է աս  
նախասահմանութեան տէրը :

Իոլոր առ էակները թող մէկ դի  
կենան, դուն քեզի նայէ թէ ով ստեղ-  
ծեց . որովհետեւ դուն ալ դիտես որ  
ատեն մը կար որ չի կայիր, ու դուն  
ինքը զինքդ չէիր կրնար ստեղծել . ու-  
րեմն հարցուր դուն քեզի . ով իս ըս-  
տեղծեց : Աստուծոյ էութիր, չէ թէ  
միայն տեսածդ՝ լածդ՝ շօշափածդ՝ քե-  
զի կ'իմացընէ, հապա քու ներսիդիդ  
ալ : Ցըցուր ինձի անանկ աշխարհք մը,  
անանկ տեղ մը, որ աստուած մը չի  
ճանչնան, արարիչ մը չի խոստովանին :  
Աստուած ինքնիրեն կայ . թէ որ

ինքնիրեն կայ նէ , սկիզբ ու վերջ չունի . անկարելի է որ մէկէն աւելի ըլլայ . բնաւ մէկէ մը կախեալ չէ . ամեն իմաստ է . ամենակարող է . ամենարդար է . ամենագէտ է . անհուն է . ամենաքարի է . վերջապէս Կ'ստուած ամենակատարեալ է :

Ամենակատար ըլլալը երկու բանով կ'ըլլայ . գիտնալով ու կարենալով : Կ'ստուած ամեն բան գիտէ , ու ամեն բանի կարող է :

### Գ. Ա. ՈՒ Խ .

## ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՅ

Աս աշխարհքիս մէջ շատ էակներ կան , մարդն ալ անոնց մէջ զատ էակ մըն է . բայց անոնց մէկուն ալ չի նըմանիր :

Անսունները կը ծնանին կը մեծանի կը մեռնին , ոչինչ ըլլալու համար : Ո՞հայն մարդն է որ մեռնելին ետեւ ոչինչ ըլլար կ'անմահանայ :

Ամեն աշխարհք անմահութեան կը հաւատան : Ո՞արդիկ ամենեւին չեն կրնար քաշել որ , մեռնելնուն ետեւ իրենց անունը ոչնչութե՛ խառնուի . կերպիւ մը աս աշխարհքիս վրայ անգամ , ինքը ինքնին անմահ ընել կ'ուզեն :

Ամեն մարդու սրտին մէջ ինչո՞ւ առ  
անմահութեան սէրը կայ . Կոտուած  
կը խաբէ՞ մի : Յօէ որ անմահութիւն  
չի կար նէ , ուրիշէ է մեր ներսի դիսի  
առ անմահութեան տեհնը . ինչո՞ւ բը-  
նութիւնը մեզի անմահութիւնը սի-  
րել սորվեցընէր պիտի :

Վակ , ամէն անասուն ուզա-  
ծը ձեռք անցընելէն ետեւ գոհ է .  
բայց մարդս ինչո՞ւ բնաւ գոհ չի կըր-  
նար ըլլալ : Իր սիրտը աշխարհքէս մեծ  
է . առ աշխարհքիս վրայ ինչ հաճոյք  
և ինչ երջանկութիւն ալոր ձեռք ան-  
ցընէ , գոհ չէ , ալ աւելին կը փըն-  
տըռէ : Դոհ չի կրնար ըլլալ , վասն զի  
երջանկութիւնը հոս չափուած է , և  
մարդուն վնատըռած երջանկութիւնը  
անսահման է : Իսելէ որ իր վնատըռած  
անսահման երջանկութիւնը իրեն ու-  
րիշ տեղ մը պատրաստուած է :

Կոտուած արդար է ըսինք . ուրեմն  
ինչո՞ւ բարեգործ մարդիկ երջանկու-  
թեան չեն հասնիր ու չարագործ մար-  
դիկ չեն պատժըլիր : Վո՞ հատուցում  
ները առ աշխարհքիս մէջը վինարուես  
նէ , Կոտուծոյ գործքերն ալ անցաւո-  
րիս կարծ չափովը չափած կ'ըլլաս . ար-  
դարութեան վարձքն ու պատուհար  
յաւիտենական և անվախճան պիտի  
ըլլայ : Հոս մեր բնակած երկրագուն-  
տին մէջ ոչ յաւիտենականութիւն և

ոչ անվախմանութիւն ըլլալով, ըսելէ  
որ ուրիշ աշխարհք մը կայ, որ մեր  
փնտըռածն ալհոն պիտի գտնըլի: Ո՞ւր  
փնտըռածը որովհետև երջանկութիւն  
է, ըսելէ որ մեր նպատակն ալ անսահ-  
ման երջանկութիւնն է, որ է նոյն ինքն  
Աստուած :

Գ Լ Ո Ւ Խ Պ .

Ա Ռ Ա Ք Ի Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Հ Ի Մ Ա Յ Հ Ա Յ Բ Ի Ն Ք թէ ինչ կերպով ան  
երջանկութեանը կրնանք հասնիլ: Ո՞ւ-  
ղի բնական լոյս մը տրուած է, որով  
արդարն ու անիրաւը կը ճանչնանք,  
բարին ընելու ու չարէն փախչելու կը  
ջանանք: Իսայց բարին չարէն որոշելու  
համար պէտք է որ կանոն մը ունե-  
նանք: Այս կանոնը մեր վախճանն է,  
մեր նպատակն է. պէտք է որ ամեն ը-  
րածնիս նպատակներնուս հասնելու  
համար ըլլայ, և այս բանիս համար մե-  
զի առաջնորդ մեր բնական լոյսն է:

Այս բնական լոյսը՝ ամեն մարդու  
քովկայ. և ատոր գիտակցութիւնն կ'ը-  
սենք: Ատովամեն մարդ՝ բարին ու չա-  
րը ճանչնալու կարողութիւնն կ'ունե-  
նայ, և մէկը չընէ ու միւսէն չի փախ-  
չինէ, յանցաւոր կ'ըլլայ: Ատիկայ՝ գիւ-

տակցութիւնն ալ մեր ներսի դիէն մեզ  
կը գիտցընէ : Այէ կայէն ի՞նչպէս  
իր յանցանքը գիտցաւ , ի՞նչպէս մար-  
դասպան մը այս ներքին զգացողութե-  
նէն տանջուելով երերեալ տատանն ալ  
կը պտրաի , ու բնաւ հանգստուի չու-  
նի իր խիղճէն : Ի՞նչպէս առաքինին՝ իր  
պարտքը կատարած ըլլալը ներսէն զգա-  
լով խաղաղուի հոգւոյ ունի , ու ի՞նչ-  
պէս մոլին՝ իր ըրածին գէշութի ըլլալը  
ներսէն իմանալով վրդովի մէջ է :

Դրեթէ բան մը ըրածնուս պէս , այս  
մեր ներքին զգացողութիւնը՝ ըրածնիս  
կշխոքէ կ'անցընէ , ու ըրածնուս նայե-  
լով , մեզ կը պատժէ կամ կը վարձատ-  
րէ : Եւ ամեն մարդու քով աս զգա-  
ցողութիւնը ըլլալուն , ով կըլլայ ըլ-  
լայ , առաքինութիւնը կը գովէ մոլու-  
թիւնը վար կը զարնէ , թէ իր քովը  
տեսնայ , և թէ ուրիշին քովը :

Ազկեստեայ իր էրիկը մահուանէ  
ազատելու համար իր անձը նուիրելը ,  
և Առկրատի մը կամ Արիստիդէսի մը  
ըրածը լսելով՝ մարդս ի՞նչ վիճակի մէջ  
կ'ըլլայ ըլլայ , թէ վայրենի ըլլալով մարդ-  
կային գիտութեանց անտեղեակ ըլլայ ,  
թէ քաղաքական վիճակի մէջ վարժը-  
ված բարեկիրթ ըլլայ , իր ներսէն ա-  
տոնց զմայլիլ մը կուգայ ու կը գովէ .  
ահա ասանկ ալ Աերոնի մը ու Տիբե-  
րի մը ըրածը լսելով , իր ներսէն զրգ-

ուիլ մը կը զգայ , ու անոնց ըրածը կը գատապարտէ :

Մարդկային ընկերութեան մէջ ալ փնտըռենք նէ , կը գտնանք որ օրէնք ներ սահմանած են , կանոններ դրած են , առաքինութեան վարձք ու մոլութեան պատիժ տալու :

Ո՞ւր ներսի այս գիտակցութիլ և մարդկանց մէջ սահմանուած այս դատաստանը , ուրիշ ահագին դատաստան մը ըլլավիքը կ'իմացընէ : Հոն աստուածային արդարութիւնը՝ ամեն բան իր կշխոքէն պիտի անցընէ , և բոլոր մեր գործքերը բարի կամ չար , միջոց մը պիտի ըլլան մեր նպատակին մեզ մօտեցընելու , կամ անկէ հեռացընելու :

Իսելէ որ , մեր նպատակին հասնելու համար պէտք է որ առաքինի ըլլալու ջանք ընենք , ու մոլութենէ փախչինք :

## ԳԼՈՒԽ Դ.

ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՊԱՐՏՔԵՐՆԻՍ

ԿԱՄ

ԱՍՏՈՒԱԾ ՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՔԻՆԻ ըլլալու համար , առաջ մեր պարագերը կատարել պէտք է : Ո՞ւր

առջի պարտքերը առ Աստուած է . և  
աս պարտքերը Ճանչնալն ալ դժար չէ :  
Ա տան զի թէ որ մենք մեզի հարցը-  
նենք թէ Աստուած ի՞նչ է , մենք ի՞նչ  
ենք . անանկով դիւրաւ կը գտնանք :

Ո՞նք ՚ի բնէ անսահման փափաք  
մը ունինք . բայց անիկայ լեցընելու  
կարողութիւն չունինք : Իսկ որովհե-  
տեւ Աստուած ամենարդար է , ՚ի հարկէ  
առ փափաքը լեցընելու բան մը պատ-  
րաստած պիտի ըլլայ : Ես կը նայիմ որ  
ամեն բանի չափ ու սահման ինքն է .  
ուրեմն իմ փափաքս լեցընողն ալ ին-  
քըն է :

Ուստի նախ՝ իմ անյագ իմացակա-  
նութիւնս գոհ ընելու համար , պէտք  
է որ միշտ իրեն անսահմանութեանը  
վր մտմըտամ , միշտ իրեն մեծութիւն-  
ները մտքէ անցընեմ , միշտ իրեն ամե-  
նագէտ ըլլալը յիշատակեմ մտքիս մէջ :

Ամանապէս իմ անյագելի կամքս լե-  
ցընելու համար , պէտք է որ ամեն լը-  
րածներս ու բոլոր փափաքները՝ իր  
անսահմանութիւնը մտածելով ըլլայ ,  
քանզի երջանկութեան աղքիւրը և  
անսահման երջանկութիւնը ինքն է :

Երկրորդ՝ ինքըզինքս կը սիրեմ , բայց  
սիրելուս մէջ կատարելութի կը փըն-  
տըռեմ : Կատարելութիւնը որովհե-  
տեւ միմիայն Աստուածոյ քով է , ուրե-  
մն պէտք է որ զԱստուած սիրեմ , և

իզմէ աւելի սիրեմ, վասն զի իմ փրնեալուածս կատարելութիւնը ըլլալուն, իմ անձս չէ, հապա ինքն է :

Երբորդ՝ աս կատարեալէակը միշտ մաքիս մէջ բռնելով, և ուրիշ բաներուն ունայնութեանը ու անկատարութեանը վրայ մտածելով, պէտք է որ բոլոր ունայն բաները չի սիրեմ, հապա միմիայն զլչստուած սիրեմ :

Չորրորդ՝ միշտ իրեն անսահման կարողութիւնը և արդարութիւնը միտքը բերելով, պէտք է որ իրեն հընազանդիմ, զինքը պատուեմ : Ամեն բան և ամեն արարած միմիայն իր կամքէն կախուած ըլլալուն, ինչ որ ուզէ այն կ'ընէ, իրեն չի հնազանդողները կը պատժէ, և իրեն կամքը կատարողները կը վարձատրէ :

Ենգերորդ՝ ըստ որում Վատուած ամենակարող է և ամեն բան իր ձեռքըն է, ուրեմն պէտք է որ զինքը միշտ օգնութեան կոչեմ, աղօմք ընեմ, որ իզմէ չարը դարձընէ, և չարը եկած ժամանակը զօրութիւն տայ ինծի անորդիմանալու :

Վեցերորդ՝ իմ ամեն փափաքըս՝ անսահման կատարելութեան մը հասնիլ ըլլալուն, պէտք է որ ես ալ կատարեալ ըլլալու ջանք ընեմ Վատուծոյ նմանելու հետեւելով, որ ինքն է անսահման կատարելութիւն : Վայց աս

կատարելութեանս ի՞նչպէս կրնամնը  
մանիլ . մեր խելքը ահա ատ բոլորովին  
մեզի չի գիտցըներ : Ուղօրովին կ'ըսեմ .  
վասն զի Աստուծոյ մեզի տուած բնա-  
կան լոյսովը չարն ու բարին կը ճանչ-  
նանք , և գիտենք միանգամայն որ բա-  
րին մեզ կատարելութեան կը մօտեցը-  
նէ , և չարը անկէ կը հեռացընէ : Ուս-  
տի ըսելէ որ ատ բնական լոյսը՝ կա-  
տարելութեան ինչպէս նմանելիքնիս  
մեզի քիչ շատ կ'իմացընէ :

Ասկէ ՚ի զատ , Աստուած իր ընարե-  
լոց ձեռքովը մեզի իր կամքը գիտցու-  
ցեր է : Կնոր նմանիլ ուզողը՝ պէտք է  
որ անոր կամքը կատարէ : Ոէկ խօս-  
քով ըսեմ , մեր առ Աստուած ունե-  
ցած պարտքերնիս՝ աս չորս բանն է .  
Ոէր , Հնագանգութիւն , Պատիւ ու  
Պաշտօն :

Պաշտելը չէ թէ միայն ներսէն ըլ-  
լալուէ , հապա նաև արտաքին նշաննե-  
րով ալ . և ինչպէս որ մտքերնուս ան-  
ցածը բերնովու զգայարանքներովինիս  
կ'իմացունենք , ահա ասսանկ ալ բնա-  
կան բան մըն է՝ հաւտալնիս ու պաշ-  
տելնիս դրսի նշաններով ցըցունել :  
Աս ցըցունելը՝ ամեն տեղ ժողովով  
կ'ըլլայ , ինչ կրօնք կ'ըլլայ ըլլայ : Ինչ-  
պէսոր Աստուծոյ չի հաւտացողմարդ-  
չի կրնար ըլլալ , անանկ ալ տեղ չի կայ  
որ Աստուած պաշտելը ժողովով ըլլայ :

# ԳԼՈՒԽ Ե.

ՄԵՐ ՆՄԱՆՆԵՐՈՒՆ ՈՒՆԵՑԱԾ.

## ՊԱՐՏՎԵՐՆԴՍ

Ան Կատուած ունեցած պարտքեր  
նիս ըսելէն ետեւ, մեր նմաններուն  
հետ ունեցած պարտքերնիս զրուցենք:

Ո՞նք ընկերական վիճակի մէջ ենք:  
Կո ընկերութեան անդամներուն ամեն  
նրեալ, ըստ որում անդամ, զատ զատ  
երենց իրաւունքները ունին: Իրաւունք  
բառը մտացածին բառ մը չէ. թէ որ  
ատանկ ըլլար նէ, բոլոր մարդկային օ-  
րէնքները՝ անկանոն կամքի մը հետեւ-  
անքը պիտի ըլլար, և այն օրէնքներ-  
ուն արդարութիւնը՝ աննշանբառ մը:

Բոլոր մարդկային իրաւանց աղքիւ-  
ըլ մէկ հատիկ է. որ է՝ ամեն մարդու  
իր ծնած ատենը ապրելու ու մեծնա-  
լու ու իր նպատակին հասնելու իրաւ-  
ունքը իր հետը բերելը:

Իրենց ապրելու ու մեծնալու կեր-  
պը, ասանկ ալ իրենց նպատակին մի  
և նոյն ըլլալը՝ կապ մը կ'ըլլայ ընկերու-  
թեան անդամներուն մէջ տեղը, ու  
ասկէ անմիջապէս կը ծագին անդամնե-  
րուն մէկզմէկու ունեցած պարտքերը,  
և քանի մը կերպի կը բաժնըլին:

# ՅՈՒՌԱԾԱ

ՊԱՐՏՎ ԱՌ ՃՆՈՂՍ

ԿԱՄ

ՃՆՈՂԱԾԻՐՈՒԹԻՒՆ

ՅԵՐԱԿԱ մեղի կեանիք տուողը Ասու-  
ուած է, բայց որովհետեւ աս կեան-  
քը մեր ծնողացը ձեռքովը տուեր է,  
ըսել է որ՝ անոնք մեր կենացը պատ-  
ճառ ճանչնալը մեղի պարտիք է :

Պղտիկութեան ատենիս, մենք մե-  
ղի նայելու կարող չեղած ժամանակ-  
իս, ծնողքնիս մեղի խնամեր, օգներ  
ու պահպաներ են. մայրերնիս մեղի ի-  
րենց կաթովը մեծցուցեր՝ մեղ տաքէն  
պաղէն պահեր են :

93 Ո՞ւ Ո՞ւնք մեղի պաշտպանելու բաւա-  
կան չեղած ժամանակնիս, հայրերնիս  
մեղի խնամակալեղեր են, մեղի պէտք  
եղածը հոգացեր են, մեղ կրթեր են,  
մեղ սիրեր են, ու միշտ կը սիրեն :  
Վերջապէս մինչեւ վերջը ամեն կեր-  
պիւ մեղ պաշտպաներ են, ու մեր բա-  
րերարներն են եղած. անանկ որ, Առ-  
տուծմե ետքը՝ ունեցած պարտքերնիս  
մեր ծնողացն է :

Օ՛է որ անոնք մեր պղտիկութեան  
ժամանակը մեղի նայեցան նէ, մեղի  
որչափ անհրաժեշտ պարտքերնիս  
մեր ծնողացն է :

կ'ըլլայ՝ ծերութեան ատենինին անոնք  
նայելու , և որչափ ապերախտութիւն  
կ'ըլլայ՝ մեր բնական բարերարները ե-  
րեսէ ձգել կամ մոռնալը : Աւստի պէտք  
է որ ամեն կերպիւ անոնք պատուենք .  
բնաւ սրտերնին չիցաւցունենք , բնաւ  
տուած խրատնին չարհամարենք , ու  
խօսքերնին բռնենք ու ընենք : Վեր-  
ջապէս պէտք է որ անոնք մեզմէ ամեն  
կերպիւ վեր ճանչնանք :

Օնողաց անհնազանդութիւն ընե-  
լէն , և մանաւանդ անոնց դէմ ապլու-  
տամբելէն մեծ յանցանք չիկայաշխարհ-  
քիս վրայ : Տղայութեան ժամանակ՝  
միշտ մոքերնուս մէջ պիտի բռնենք թէ՝  
մենք որչափ ալ շատ գիտնանք , անոնք  
մեզմէ աւելի բան տեսած ըլլալնուն ,  
մեզմէ փորձ են . ուստի անոնց հնա-  
զանդիլը մեզի հարկ մըն է : Եւ մեծցած  
ժամանակնիս ալ , պէտք է որ բնաւ չի  
մունանք թէ ատեն մը մեզմէ աւելի  
գիտցեր են , ու առանց անոնց բան  
մըն ալ չէ ինք ըլլար : Վերջապէս միշտ  
մոքերնուս մէջ պիտի ըլլայ որ , մեր ծը-  
նողքները լատուծոյ կողմանէ մեզի  
երկրորդ նախախնամութիւն եղած են :

Օնողքդ երեսէ ձգել , չի սեպել  
ու չի սիրելը , չէ թէ միայն լատուծոյ  
անհաճոյ բան մըն է , հապա ընկերու-  
թեան ալ , ազգին ալ , բարեկամնե-  
րուդ ու քուկին մեծերուդ ալ : Ի՞նչ

վարկում ունենան քու վրադ , ի՞նչ  
յարդ ունենան քեզի , և ի՞նչ երախ-  
տադիտութիւն , ի՞նչ սէր , ի՞նչ առա-  
քինութի սպասեն քեզմէ , թէ որ քեզի  
սիրողը յարդողը մեծցընողը , և քու-  
կին է ութեանդ ու բոլոր ունեցածիդ-  
պատճառ ըլլողը ասանկ կը կոխես նէ :

## ՅՕԴՈՒԱԾ Բ .

Պ Ա Ր Տ Ք Ա Ռ Ո Ր Դ Ւ Մ

Կ Ա Մ

ՈՐԴԵՍԻ-ՐՈՒԹԻՒՆ

Օ ԱԽԱԿ սիրելը՝ անանկ բնական բան  
մըն է որ , մինչեւ անասուններուն քով  
ալ կայ : Այսիրելը՝ սիրուելէն աւելի պէտք  
մըն է մեր սրտին . ու զաւակնիս եր-  
ջանիկ տեսնելով , ինքըզինքնիս աւելի  
երջանիկ կը համարինք քան թէ մենք  
ինքնին երջանիկ ըլլալով :

Կ'ըսեն որ Ճշմարիտ բարեկամ մը՝  
գանձ մըն է : Ովկեզի զաւկէդ աւե-  
լի բարեկամ կրնայ ըլլալ : Տունկ մը ջր-  
բես ու մեծցընեսնէ , գիտես թէ իր հե-  
տը կը կապուիս . ասիկայ արտաքին բան  
մըն է որ իմա է կրնաս ըսել . զաւակդ  
որ քուկին մէկ մասդ է՝ որ դուն ըսել  
ես , քուկին խնամօքըդ հոգերովըդ ու

աշխատանօքդ մեծցեր է , ո՞րչափ անոր հետ կապուելու ու անոր ամեն ըրածին ու եղածին մասնակից ըլլալու մէկ բանըդ պիտի ըլլայ : Աւստի անոր աղէկ ըլլալուն որչափ ջանք ընել պարտք մը ու հարկ մըն է քեզի . պղտիկութեան ատենը իր մարմնաւոր կարիքները հոգալու , և քանի որ զարգանայ ու մեծայ նէ , զինքը ուղիղ ճամբու առաջնորդելու ու երջանիկ ըլլալու ճամբան մոցունելու : Արդ՝ թէ որ այս բնական սպարտքէն մէկը ետ կենայ նէ , ո՞րչափ աղէտալի ու թշուառ մարդ եղած կ'ըլլայ : Աս իր անհոգութեանը ու վատութեանը դէմդրեթէ հաւասար պատիժ ետեւէն կը հասնի , որ էղաւկի մը իր ծնողացը դէմ ըրած ապերախտութիւնը : Չիստեմ ինչ բան կայ աշխարհքիս մէջ ասկէ աւելի անտանելի : Անշուշտ բարեկամ ունենալու տեղ՝ անհոգ մը կամ թշնամի մը ունենալ . . . :

Ի՞նչ վարկումի տէր կ'ըլլայ մէկը մարդոց առջին , թէ որ իր զաւկին չինայի կամ նոյիլը չի գիտնայ : Ի՞նչ նախատինք է իրեն թէ որ իր անունը կրող մը այն անուանը պարսաւանացը պատճառ ըլլայ : Արկէ ՚ի զատ , Աստուած , որ տղի մը ապագան , աղէկ կամ դէշըլլալիքը ծնողացը յանձներ է , ՚ի հարկէ օր մը իրենցմէ հաշիւ սկիտի ուղէ ըրածնուն :

Աւստի պէտք է որ ծնողքները ի-  
րենց զաւկին ամեն պէտքերը հոգան ,  
պզտիկութեան ժամանակը մարմնոյ վե-  
րաբերեալ ինամբները կատարելով .  
ու քանի որ մեծնայ , միտքը ու սիրու  
կոթելով . ասանկովիրենց ծերութեան  
ժամանակը՝ միսիթարութիւն մը պատ-  
րաստած կ'ըլլան իրենց , միանդամայն  
նախախնամութեն կողմանէ իրենց գըր-  
ուած մէկ պարտքը կատարած կ'ըլլան :  
‘ Յանապէս ազգի մը , ընկերու-  
թեան մը աշխանաւոր անդամ պատ-  
րաստած ըլլալնուն , հասարակութեան  
երախտագիտութեը ու գովասանու-  
թեան արժանաւոր եղած կ'ըլլան :

## ՅՈՒՌԱԾ

ՊԱՐՏՎ ԱՌ ԵՆՔ ԱՐՍ

ԿԱՄ

ԵՐԲԱՑՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Իւշպէս որ մարդիկ Կատուծոյ առ-  
ջն հաւասար են , ասանկ ալեղբարք  
իրենց ծնողացը առջին հաւասար են :  
Իրենց ինամակալներն ու նախախնա-  
մութեան կողմանէ իրենց գործադիր  
բարերարները մի և նոյն են : Կ'ս պատ-  
ճառաւըս , և պզտիկուց մէկ տեղ մեծ-

ցած ըլլալովնին , մէկզմէկու ընկերանաւ  
լը իրենց սովորութիւն մը և պէտք մը  
կ'ըլլայ , ինչպէս ալ մէկզմէկու ձեռըն-  
տու ըլլալը հարկաւորութիւն մը :

Եղբարց մէջ իրարու նախանձիլ  
կամ մէկզմէկու ղրկմանը ջանալը , չէ  
թէ միայն վատութիւն է , հապա նաև  
անհնարին յիմարութիւն է : Ո՞էկ դի  
դնենք բարոյական պարտականութիւ-  
նը , մի միայն անձնասիրութենէն ու  
շահախնդրութենէն անգամ խորհուրդ-  
առնելով , մեր եղբարցը հետ վարուե-  
լու կերպը սորվել ուղենք նէ , կը նա-  
յինք որ խելացիութիւնը անոնց ձե-  
ռընտու ըլլալ և անոնց աղէկութիւնը  
ուղեն է : Աս աշխարհքիս վրայի դիսկ-  
ուածները և պատահմունքները այն-  
չափ մեր կարգագրութենէն մեր խել-  
քին հասած ճամբէն հեռու են որ ,  
շատ անգամ աւելի անտենկալ բաներ  
կը պատահին : Աս պատճառաւս մեզի  
պատահելու բաներէն վեաս չի քաշե-  
լու համար , արդէն մեզի օգնական  
ճարելը մեզի հարկ մըն է : Ահա ասոր  
համար ճշմարիտ ունեորը ճշմարիտ բաւ  
րեկամ ունեցողն է : Ո՞ի մնալուեր հի-  
ման Պիւղադէս մը կամ Ավեստէս մը :  
Ո՞էկ մարդ մը՝ բոլոր իր կեանքին մէջ  
աշխատելով , բարեկամութեան պար-  
տականութիւնները դիացող ու գործի  
դնող մարդ՝ հազիւթէ մէկ հատ մը կը

գտնայ , ու երանելի է թէ որ աստանկ  
բաղդի մը հանդիպի : Ահա բարեկամ  
մը այդշափ անգիւտ բան մըն է : Վեր  
եղբարքը բնութենէն առ ՚ի պարզեւ  
մեզի տրուած բարեկամներեն : Ուրեմն  
Բնէ յիմարութիւն , թէ որ մեր ատ  
բնական բարեկամները մեզի բարեկամ  
պահելու տեղ անոնք մեզմէ հեռացը-  
նենք , կամ անոնց գէշտթիւն ընելու  
ելլալով , անոնք մեզի թշնամի ընենք :

Ի՞դ հանուր մարդոց հետ ունեցած  
բարսյական պարտականութիւններըդ  
Բնչպէս գիտնամ որ կը կատարես կամ  
պիտի կատարես , թէ որնախքու պինդ  
մերձաւորիդ ունեցած պարտականու-  
թիւնդ մասնաս : Քու անունդ Բնչ  
պէս մարդու կարդ գրուի , թէ որ մար-  
դութեան այբուբենը անգամ չես ըս-  
կըսեր :

Վեր եղբարքը ունեցած պարտակա-  
նութիւննիս մինակ իրենց թշնամուի  
ընելէն հեռու կենալ չէ . ատիկայ շա-  
հախնդիր մարդ մըն ալ ամօժ կը հա-  
մարի իրեն , և իր համբաւը պահելու  
համար ատկէ կը զգուշանայ : Քու  
պարտականութիւնը ատկէ աւելի է .  
պէտք է որ անիկայ քու անձիդ պէս  
սիրես , իրեն հետ քաղցրութիւնը վար-  
վիս , պէտք եղած ժամանակը թէ և  
իրեն անհաճոյ ալ երեւի , իրեն աղե-  
կութեանը կարեւոր եղած խրատները

իրեն տաս , իրեն հետ քու շահըդ  
մոռնալ գիտնաս , իրեն համար՝ ատեն ,  
հեշտութիւն , պարծանք և ստակ կոր-  
սընցընելը պարտք մը ճանչնաս :

## ՅՕԴՈՒԱԾ Դ.

ԱՄՈՒՍՏՆՆԵՐՈՒՆ ՄԵԿՁՄԵԿՈՒ

ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏՎԵՐԸ

Ի՞նչ կը համարիս ամուսնութեան  
պայմանները , և ի՞նչ պարտաւորու-  
թիւն ունին ամուսինները : — Ոիանալ ,  
և միացած կենալ մինչեւ վերջը ամեն  
կերպով — :

Ինչպէս որ զաւակ մը անբաժանելի  
կերպիւ հօրը և մօրն է , ասանկ ալ իւ-  
րենց ստացուածքը և ինչքը , պատի-  
ւը և երջանկութիւնը , թշուառու-  
թիւնը և աղետքը , վերջապէս բոլոր  
պարտքերնին և ապագանին անբաժա-  
նելի կերպիւ մի և նոյն է , և պէտք է  
որ միօրինակ և միեւնոյն ըլլայ :

Տնական երջանկութիւնը մինակ աս  
միութեանը վրայ հիմնած է : Ամու-  
սինները ունեցածնին մէկզմէկէ չէ թէ  
չի պիտի խորեն միայն , հապա առանց  
իրարու հաճութեանը մէկերնին բան  
մըն ալ ընելու իրաւունք չունին , ու  
չի պիտի ընեն :

Տան մը մէջ բարի զաւակ հասցը  
նելու մանաւանդ տնական երջանկու-  
թիւնը ձեռք բերելը՝ ոչ այնչափ կա-  
տարեալ ամուսին վիստրուելավու գլու-  
նալով կ'ըլլայ, քան թէ՝ մէկը մէկալին  
պակասութեանցը ներողամիտ ըլլա-  
լով։ Կարելի բան չէ որ մարդ մը ամե-  
նակատար եղած ըլլայ, ուստի մէկը  
կատարեալ կարծելը արդէն անիկայ  
պարսաւել ու նախատելէ, ուրկէ կը-  
ոիւներ և մեծամեծ խոտվութիւններ  
առաջ կուգան, որոնք մեծնալու տղոց  
ուրիշ բան չեն պաղաբերեր, բայց մի-  
այն ինքնահաւանութիւն և մոլութիւն։

Վմուսինըդ քեզի յարմար բնութիւ-  
ունի ու ուզածիդ պէս է նէ, (չեմ  
ըսեր մարմնոյն գեղեցկութեանը մա-  
սին, որովհետեւ ասիկայ առժամանա-  
կեայ բան մըն է, և անիկայ ամեն բա-  
նէն աւելի պատուելը յիմարութիւն  
է. վասն զի ատ պատիւը կրից դըրդ-  
մամբն է. ես հոգւոյն գեղեցկութիւ-  
նը և բարոյական կրթութիւնը կը փրն-  
արուեմ)։ Թէ որ ամուսինըդ ատ մա-  
սին ուզած հանգամանիքներդ ունի նէ  
ասիկայ քեզի պատրաստուած աղէ կու-  
թիւն մըն է, որն որ նայէ որ վայելես  
առանց խանդ արելու։

Եայց թէ որ բարոյական պակսու-  
թիւններ ունի նէ, մի յուսահատիր։  
շատ անգամ մարդս իր վիճակը փոխե-

լով ինքն ալ կը փոխվի : Ասր պարագայ-  
ները իրեն նոր ձեւ կուտան : Երկու  
հոգի մէկ տեղ կենալովին , իրենց բը-  
նութեան մէջը ունեցած չարն ու բա-  
րին մէկզմէ կու կը հաղորդեն , ու մէկ  
զմէ կու բնաւորութիւնը կ'այլայլեն :

Դուն նայէ որ ընկերոջըդ մոլութե-  
նէն չի տարափոխիս , միանգամայն նայէ  
որ բարի օրինակներով իրեն բարի բը-  
նաւորութիւն տաս :

Ո՞է կը՝ որչափ կատաղի և մոլի ալ  
ըլլայ , ամեն օր աչքին առջին առաքի-  
նութեան և քաղցրիկ բնութեան օրի-  
նակ տեսնայ նէ , անկարելի է որ պինդ  
վերջը իր բնաւորութիւնը չի մեզմէ :  
Բայց լժէ որ ընկերոջըդ մոլութիւննե-  
րը տեսնելով դուն ալ պոռաս կանչես  
նէ , դիտցիր որ սն բարի ճամբայ մըտ-  
ցընելու տեղը դուն առ աջ մոլութեան  
ճամբայ մոտար : Կ'ուզե՞ս որ մէկը քե-  
զի բարեկամ ըլլայ , նախ դուն բարե-  
կամութիւն ցըցուր . ուստի քու ընկե-  
րոջըդ քեզի բարեկամ ըլլալը ուղելըդ  
ատկէ պիտի դիտնամ որ , նախ դուն  
իրեն բարեկամութիւն ցըցունես :

Բարի հոգիի հետ վարուիլ՝ ամե-  
նուն գործն է , դժարը՝ ու առաքին-  
ւոյն արժան գործը՝ չարին հետ վար-  
ուիլ , ու չարը բարի ընելն է : Աս աշ-  
խարհիս մէջ ունեցած կեանքերնիս՝  
մեր մէկ դրամագլուխն է . ատ դրամա-

գլուխոց շատցունելը բարեգործելովու  
առաքինի ապրելով միայն կ'ըլլայ : Ուր  
առիթ գտնաս առաքինի ըլլալու նէ ,  
ինքը զինքը երջանիկ սեպէ , ու գիտ-  
ցիր որ բարի ու քաղցրիկ կենաս նէ ,  
հոգիդ և մարմինըդ աւելի հանգիստ  
կ'ըլլան , քան թէ խուռվութեամբ ա-  
տեն անցունելով :

Որչափ ևս առաւել վատութիւն  
կ'ըլլայ , բարի ընկեր մը ունեցած տե-  
ղոդ՝ անոր բարի բնաւորութիւնը չի  
ճանչնալ ու ամուսնութեան պարտքե-  
րուն դէմ մեղանչել : Ասիկայ իրա-  
ւունք մը տալ է դիմացինիդ քեզի ան-  
հաւատարիմ ըլլալու : Հոս ամենէն  
եվել միտքըդ պիտի բերես թէ ինչ որ  
կ'ուզես որ քեզի չընեն , դուն ալ մի  
ըներ :

Ամուսնութեան վախճանիը՝ զաւակ  
ունենալ , ու զաւակ հասցընելէ : Թէ  
որ ամուսինները մէկզմէկու ունեցած  
պարտքերնին ճանչնան ու մէկզմէկու  
հետ աղէկ վարուին նէ , բարի օրինակ  
մը կ'ըլլան իրենց զաւկըներնուն , որոնք  
իրենց բնաւորութիւնը անոնց ըրածին  
վրայ շրտկելով , բարի ու առաքինի  
կ'ըլլան . և այս ալ ատեն կուգայ որ  
իրենց երջանկուել ազբիւրը կ'ըլլայ :

## ՅՈՒՆԻԱԾ Ե.

ՄԵԶՄԻ ՄԵծերուն ԵՒ ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ՀԵՏ

ՈՒՆՍՑԱԾ ՊԱՐՏՔԵՐՆԻՍ

ՕՐԱԿԱՅ ՄԸ՝ իր ծնողքին ի՞նչ աչ  
քով կը նայի նէ , նոյն աչօք պիտի նա-  
յի իր տիրոջը . ու զաւակ մը իր հօ-  
քը ինչպէս կը ծառայէ նէ , այնպէս  
պիտի ծառայէ :

Տէր մը իր ծառային ամեն բան  
հաւտայ , իրեն յանձնէ , իր սեղանը  
իրեն բանայ , անիկայ իրեն մէկ մօտը  
մէկ մերձաւորը ընէ , իր պատիւը՝ իր  
գաղտնիքը՝ իր բոլոր ընտանիքը անոր  
հաւատարմութեանը յանձնէ , ու ծա-  
ռան աս հաւատարմութեանը աս բա-  
րերարութեանը դէմ իր ափրոջը անու-  
նը աւրելու , ինչքը մսխելու , կամ  
զինքը բամբասելու և մատնելու ել-  
լայ նէ , ատիկայ գրեթէ իր ծնողացը  
գէշութի ընելու չափ վատութիւն է :

ՕՐԱՌԱՅ մը իր տիրոջմէն բան մը  
գողնայ կամգրսէն մէկ գողմը նոյն բա-  
նը գողնայ նէ , մարդկային օրինաց առ-  
ջին անգամ մէկ աստիճան յանցաւոր  
չէն : Պատճառը սա է որ , մէկուն  
քով չէ թէ միայն գողութիւն կայ ,  
հապա անհաւատարմութիւն և վա-  
տութիւն ալ կայ :

Ա երջապէս ծառան պէտք է որ ա-

մեն կերպիւ իր տիրոջը հաւատարմու միւն ցըցունէ , բնաւ անոր մէկ հրամանը ականջին ետին չի ձգէ , ու իր տիրոջը ամեն բանը իրենին պէս պահէ ու պաշտպանէ :

Սոյնպէս տէրն ալ իր ծառան զաւ կի աչքովնայելու է : Ի՞աղդը անիկայ զրկեր ու ծառայութեան աստիճանի մէջ ձգեր է նէ , որչափ նայելու է տէրը որ իրեն մխիժարութեան գործիք ըլլայ քան թէ տրտնջալու առիթ :

Տէր մը իրաւունք չունի պայմանագրեալ ծառայութենէն աւելի քան մը ուղելու : Ի՞այց ծառայի մը մոլութեանց մէջ ինալլ՝ կամ գէշ բարքերու տէր ըլլալը տեսնայ նէ , պէտք է որ ինչպէս որ իր զաւակը կը խրատէ , այնպէս խրատէ ու ուղղութեան բերելու ջանայ :

Օ առան ալ՝ իր տիրոջը մոլութիւնները տեսնելով , պէտք է որ բնաւ այն մոլութեանցը մասնակից կամ ձեռնտու չըլլայ : Ի՞նաւ չար պատուէր մը չի կատարէ : Ի՞նաւ իր տիրոջը հրամանը տեղը տանելու համար մարդոց իրաւունքին չի դպչի :

Օ առային ու տիրոջը վիճակներուն տոտրերութիւնը տեսնալով , պէտք է որ մէկը ինքը զինքը մեծ քան մը և միւս որ վատ էակ մը չի բռնէ , ու մէկը կու հետ այն մոօք չի վարուին :

Ամենքս ալ մարդ ենք . թէ որ հոս  
մի և նոյն վիճակի մէջ չենք նէ , աեղ  
մը կայ որ ամեննիս ալ մէկ պիտի ըլլանք :

## ՅՈՒՌԱՅ. Զ.

ՊԱՐՏՎ ԱՐ ՀԱՏԱՍԱՐՄ

ԿԱՄ

ԸՆԿԵՐԱԾԻՐՈՒԹԻՒՆ

Ի՞ւշ որ կ'ուզես որ ուրիշները քե-  
զի ըլենեն , դուն ալ ուրիշներուն մի  
ըներ . ինչ որ կ'ուզես որ քեզի ընեն ,  
դուն ալ ուրիշներուն ըրէ : Աս երկու  
խօսքը՝ մարդոց մէկզմէկու հետ ունե-  
ցած բոլոր պարագերուն բովանդա-  
կութիւնն է :

Խելացի մարդը՝ սովորաբար գէշ  
կ'ըլլայ կ'ըսեն . բայց կատարեալ խելք  
ունեցող մարդն ալ անկարելի է որ գէշ-  
շութիւն ընող ըլլայ : Իր բանը գիտ-  
ցող ձարտար մարդն ու աղէկ մարդը՝  
թէպէտ մի և նոյն նպատակ չունին ,  
բայց մի և նոյն ընթացքով կը քալեն .  
ու թէ որ ձարտար մարդը՝ իր գործը  
գլուխ առնելով ուզածը ձեռք կը բե-  
րէ նէ , գիտացիր որ աղէկ մարդու համ-  
բաւ իբր վարագոյր իր վրան առնելով  
է : Աղէկ մարդ ըլլան ալ ուրիշ բան

չ , բայց միայն իր բարոյական պարտ-  
քերը կատարել :

Քու ընկերըդ , քու բարեկամըդ և  
քու եղբայրըդ մի խաբեր , մի բամբա-  
սեր , մի զբաղարեր , իրեն թշնամու-  
թիւն մի ըներ . իր ինչքը մի յափշտա-  
կեր , մի գովնար , զինքը մի մեռցըներ ,  
որ իրաւունք ունենաս ուրիշներուն  
կողմէն ալ նոյն զգուշութեանց ակըն-  
կալութիւն ունենալու :

Ո՞ւկուն գովիստը ընելլ , մանա-  
ւանդ մտիկ ընելլ այնչափ դժար բան  
է որ , գովիստ մը չգիտեմ որ ուրիշի  
մը պարսաւանքը չըլլայ , կամ առանկ  
չեղած ատենը մտիկ ընող մը գտնուի .  
Դոլոր կրթեալ լեզուներն ալ գրեթէ  
բամբասանաց ու վար զարնելու կեր-  
պը կրթուած են : Կոր պատճառը ոտ-  
է որ , մեր ներօի դին մէկ չի քաշել  
մը ունինք , որ միաքերնիս մէկը բամ-  
բասել ալ չըլլայ , կամ մէկը գովիւլ ալ  
ուզենքնէ , առանց իմանալու մեր խօս-  
քը բամբասել մը կ'ըլլայ , և մեր գովիս-  
տը պարսաւանք մը : Արտանց գովիւլու  
կարող ըլլալու համար , պէտք է որ հո-  
գիդ բարձրացած ու ազնուացած ըլլ-  
լայ , որով ամեն բան աչքէդ հեռանա-  
լով , մի և նոյն կէտի վրայ աեսնես :  
Կոուլ մարդոց յանցանքները՝ պակսու-  
թիւն և յիմարութիւն կը համարես ,  
ուստի անսնց գիւրաւ ներող կ'ըլլաս :

Դավթելի բաներուն ալ քիչութիւնը  
տեսնելով, անոնք առելի կը յարգես :  
Մարդ՝ մինչեւ որ աս կէտք չի հասնի,  
բարոյական կատարելութիւն ունեցած  
չի սեպուիր, աս բարոյական պարտքերը  
կատարելապէս չի կրնար կատարել :

Երեք չորս տարեկան տղի մը հայրը  
կամ մեծերը՝ տղին ըրածին ու անկէ  
իրենց եկած նախատանացը և թշնա-  
մութեանցը դէմ չգիտեմ ինչպէս վր-  
բէժինդիր ըլլալ կրնան ուզել, ու ա-  
սոր համար իրենց ատենը անցընելլ որ-  
շափ յիմարութիւն կըլլայ : Իմ գիտ-  
ցածը՝ տղին ըրածին վրայ կը խնդան  
ու մէկ դի կ'անցնին, ու թէ որ բար-  
կանալով վրէժ առնելու ելլան նէ ու-  
րիշները իրենց վրայ կը խնդացընեն :

Չեմ գիտեր ինչ մեծ տարբերու-  
թիւն կայ պղտիկ տղոց ու մեծ մար-  
դոց մէջ տեղը : Տղայ ըսելով, կը հառ-  
կրնանք որ մեզմէ քիչ կատարելութիւն  
ունին, այսինքն մեզմէ քիչ բան գի-  
տեն, և քիչ բանի կարող են : Բայց  
մեծ մարդիկ կատարեալ են : Ու թէ  
որ կատարեալ չեն, ՚ի հարկէ քիչ տար-  
բերութեամբ անոնք ալ տղայ են, և  
Վասուած ալ մարդոց աս աչքով կը  
նայի :

Դիտացիր որ խելացի մարդը՝ իր գոր-  
ծին յառաջ երթալուն միայն կը նայի .  
շերթար իր գործը ձգելով ինքը վիճը

մոռնալով վրէժինդրութեան ելլալ .  
որովհետեւ պինդ վերջը կը տեսնես որ ,  
թշնամութիւնը չէ թէ միայն քու  
թշնամիիդ չար պաղաբերերէ , հապա  
քեզի ալ :

Ոովորաբար վրէժինդիր ըլլալ ու-  
զողները՝ տկար խելքի տէր ըլլողներն  
են . բայց ասիկայ՝ թշնամիէդ քեզի գա-  
լիք թշնամութիւններուն առջեւը  
առնելու մի նայիր ըսելչէ . նայէ որ  
քեզի գէշութիւն մը չի գայ . քեզի  
գալիք գէշութիւնները անկարելի ընե-  
լու ջանք ըսէ : Բայց երբոր ետքը քե-  
զի թշնամութիւնընողին աղէկութիւն  
մը ընել պէտք ըլլայ նէ , վրէժինդիր  
ըլլալու տեղը , նայէ որ ան աղէկու-  
թիւնն ալ ընես :

Թշնամիիդ վրայ ընելիք պինդ մեծ  
յաղթութիւնդ՝ անիկայ իր թշնամու-  
թիւնէն ետ կեցընելն է . և ասոր հա-  
մար գէշութեան դէմ բարերարու-  
թիւն ընելէն ուրիշ մեծ զէնք չես կը-  
նար ունենալ :

Բարեկամեղիր թշնամի եղիր , բա-  
րերարութիւնդ մի ինայեր : Այսմիա-  
ւոր մէկ հեշտութիւն մը դեռ չի լը-  
մընցուցած կէս ճամբան ճանձրանալմը  
կուգայ . բայց բարսյական հեշտու-  
թիւնները ատանկ չեն :

Հարցուք բարերարին մէկին , թէ  
աղքատի մը մերկ տղաքները պաղէն

տաքէն պահած ու անոնց արցունքը  
սրբած ժամանակը ի՞նչ հեշտութիւն  
իմացաւ, ու այն զգացած հեշտու-  
թիւնը ուրիշ մարմնաւոր հեշտու-  
թիւններուն պէս շուտով անցան մի:

## ՅՈՒՍԻԱԾ Է.

ՊԱՐՏԻ ԱՌԱՋՎՆ

ԿԱՄ

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ծ ԿԵՐԱՆԱԼԸ՝ մարդուս համար բը-  
նական օրէնք մըն է . մարդկային խիստ  
մէնծ ընկերութիւնը՝ բոլոր աղքի-  
մարդկան ժողովն է , և պինդ պղտի-  
կը , իր ընտանիքն է . աս երկու ծայր  
ընկերութեան մէջ տեղը խել մը գըտ-  
նուած ուրիշ ընկերութիւններ ալ կան ,  
որոնց օրինաւոր և գլխաւորը՝ մար-  
դուս իր աղքն է :

Հայրենիքը ուրիշ բան չէ , բայց  
եթէ այն տեղը , ուր որ մէկը աշխարհք  
կուգայ , և իր հայրը մայրը կը ճանչ-  
նայ , ուր կայ իր նախնեացը՝ իր աղքա-  
կաններուն՝ իր բարեկամներուն՝ ծնո-  
ղացը սոկրներուն նշխարները ու դամ-  
բարանները . ուր կայ նախնեացը նա-  
հատակութիւններուն և ուրիշ ըրած

գործքերնուն յիշատակարանները . ուր  
առեր է իր կրօնին ու հաւատոյ կրտա-  
կը : Վերջապէս հայրենիքը գրեթե ու-  
րիշ բան չէ , եթէ ոչ , ազգին ժողո-  
վատեզին : Ի արդյականաբար , մեզի հա-  
մար հայրենեաց հետ կապուիլն ու ազ-  
գին հետ կապուիլը մի և նոյն է : Ո՞եկը  
կամ միւսը սիրելու համար ալ , ինչ-  
պէս որ ՚ի բնէ խրատեալ եմք ծնողք-  
նիս սիրելու և ինչպէս որ ասոր հա-  
մար ոչ մեր շահէն և ոչ մեր խելքէն  
խորհուրդ կ'առնեմք , այլ մեր սրտին  
մէկ անխօրշելի սիրտոքքը կը լեցընեմք ,  
ահա այնպէս ալ մեր հայրենիքը և մեր  
ազգը սիրելու բնութենէն թելադրած  
ենք : Ո՞երնախնիքը ու ծնողքնիս սիրել-  
նուս համար , անսնցամեն ունեցածնին՝  
անուննին և բնակած տեղերնին կը սի-  
րենք , ու ադ բաներուն հետ կը կապ-  
ուինք . աշխարհքիս վրայ տեղ չի կայոր  
մարդս իր հայրենեացը , իր նախնեացը  
իրեն կտակ ըրած տեղերուն՝ ու յի-  
շատակութիւններուն և անուանը վր-  
այ սէր չունենայ :

Ի այցազգասիրութիւնը՝ մինակայդ  
բնական սիրոյն հետեւանքը չէ . մեր  
անձնական ազատութիւնը , մեր ու  
մերիններուն և բոլոր ունեցածնուս  
ապահովութիւնը ազգային օրինաց և  
մեր հայրենեաց անխախտ կենալուն  
վրայ հիմնած ըլլալով , մեր շահն ալ՝

աղդի և հայրենեաց հետ կապուիլկը խրատէ մեզի , և ասն զի թէ որ աղդ ըւը լսր , ուր կը մնար աղդային պաշտպանութիւնը և աղդային օրէնքները . և ասնք աւ ըրլային , ուր կը մնար ընչից տէր ըլլալու իրաւունքը , կամ անոնք ապահով պահելու միջոցը , և վերջապէս , մեր ազատութեան և կենաց ապահովութիւնը որ հիմանց վրայ կը նար կենալ :

Հայց թէ որ աղդերնուս անխախտ կենալը մեզի ամեն կերպիւ պէտք է , ու թէ որ անիկայ սիրելը մեզի բնական պէտք մըն է նէ , ՚ի հարկէ պարտականութիւն կար մեր վրայ աղդերնիս սիրելէն ետ չի կենալ . և որովհետեւ աղդերնիս որչափ որ զօրտուոր ըւլսյ ու հաստատ կենայ՝ այնչափ ալ մեր շահուն և մեր սրտին գիտումը լեցուած կ'ըլլայ . ուրեմն ամեն կերպով պիտի աշխատինք աղդին քաջալաւութեանը և իր բարոյական ուժին աւելնալուն :

Հայց աղդին ոլինդ մեծ ուժը , միաբանուին է . ուր միաբանութիւնկայ , աղդ կայ , ուր միաբանութիւն չի կայ , կամ աղդ չի կայ , կամ չիք ըլլալու մօտ է , ըսել է որ առջի պարականութիւննիս , աղդասէր ըսուելու համար միաբանութիւն ունենալու է . միաբանութիւնը խորհրդոյ քանի և գործոյ :

Ազգի մը մէջ երկու կարգ ազգաւինք կան . մէկը թէ հայրենեաց թէ հայրենի կրօնի և օրինաց պաշտպանութեանը համար ազգին կողմանէ ընտրուածներն են , և միւսը առ պաշտպանութիւնը յանձնառու ըլլող և այն պաշտպանութեանը աակը գտնուողներն են :

Հայց մարդը՝ ինչ կարգի մէջ աւգտնուի , պարտականութիւն ունի ամեն կերպով ազգին պաշտպանը և օգնականը ըլլալու , թէ և ասիկայ իր ներկայ շահուն գէմ ըլլաց : Պէտք է որ գիտնայ ազգին համար իր շահը չի մնանալ կամ մոռնալ , իր ինչքը իր ըստացուածքը իր կեանքը անգամ ազգին աղէկութեանը ու պատուոյն նուիրել : Կմիկայ ըսել չէ որ մարդը իր ազգին համար ամեն բան պիտի մոռնայ , իր մարդկային ուրիշ պարտականութիւնները չի պիտի կատարէ : Մարդը իրաւունք չունի ազգին աղէկութեանը համար գէշութիւն մը ընելու կամ ուրիշի մը իրաւունքին դպչելու : Թէ որ ազգին աղէկութեանը վրայօք անհոգ կենալը վատութիւն է նէ , մէկ կողմէ ալ ազգին նուիրելու կերպով իր եղբայրը , իր ծնողքը մեռցնելը կամ ասոք պէս ուրիշ չար բան մը ընելին ալ վայրենի ազգասիրութիւն մըն է , որ մոլութենէն վար չի մնար :

Վզգիդ ունեցած պարտականութիւններդ կ'աւելնան , թէ որ ազգին կողմանէ կարգեալ օրինաւոր մէկն ես նէ : Են վայրկեանին որ ազգին կառավարութիւնը յանձդ առիր , ան ատենէն պէտք է որ բոլորովին ազգը դուն ըլլաս . ազգին շահն ու պատիւը և համբաւը քու շահդ՝ քու պատիւդ , և քու համբաւը համարես . ազգին կրրած աղէտքը նեղութիւնները և թըշնամանքը քու անձիդ վրայ կրածի պէս սեպես . իր յառաջադիմութիւնը և հասարակաց օգուտը քեզի նըպատակ բունելով , բոլոր ինչքդ՝ շահդ՝ փառքրդ՝ զուարձութիւններդ ու ապագադ մոռնաս , կամբանի տեղչիդնես : Որովհետեւ յանձնառու եղար ազգիդ խնամբին , ՚ի հարկէ պարտաւորութիւն ունիս ըրած խոստմունքդ կատարելու . քու կին տպագադ քու կին առաջին գործքրդ առաջին պարտքդ առ խոստմունքդ կատարելնէ : Ծէ որ կարող չես այդ չափին նէ , մի յանձնառու ըլլար . թէ որ եղար նէ , մեռնիլդ աւելի աղէկ է քեզի , քան թէ ինքըզնքիդ առջեւ ամօթով ըլլալ :

Իր ազգը սիրելը՝ մինակ անիկայ մեծացընելու պատույ հասցընելչէ : Այսկէ աւելի , անիկայ չի պատիկցընել , իր հայրենի պատիւը և կրօնքը պահել , ազգին օրէնքներուն չի դպչիլ , ու պակ-

սութիւնները վերցընել . վերջանկս անշմիաբանութեան և երկպատակութեպատճառ ըըլլալն է :

Ազգդ սիրելը ատկէ դիտնամ որ ,  
հասարակաց օգուտը քու անձնական  
շահէդ վեր բոնես ու ազգդ արհա-  
մարհ չի բոնես : Մարդը՝ իրաւունք  
ունի իր նախնեացը ու իր հօրը համ-  
բաւովը պարծիլ . մարդիկ ինչ որ ալ ը-  
սեն ասոր դէմ , աղնիւ ծնունդ մը միշտ  
բաղդ մըն է և նախնեացը մէջ մեծա-  
նուն մարդիկ ունենալը շնորհք մըն է :  
Իայց անոնց փառքը չես կրնար շարու-  
նակել նէ , նախնեացդ աղնիւ անունը  
քեզի նախատինք մը կ'ըլլայ , ան ատե-  
նը լաւ ևս էր որ անանուն մէկուն սե-  
րունդը ըլլացիր : Կհա ասանկ ալ թէ  
որ ազգդ մեծանուն է նէ , նախատանաց  
արժան չի գտնուելու համար քեզի  
հարկ է անոր սլարծանքը անբծութք  
շարունակելու : Կսոր հակառակը՝ թէ  
որ ազգդ անանուն ու արհամարհելի  
է նէ , այն անարդանացը դուն մասնա-  
կից չես ըլլար , թէ որ այդ անունը ազ-  
գիդ վրայէն քերելու ջանք ընես՝ որով  
ազգդ փառաւորած , և անոր փառա-  
ւորելովը հասարակութեան երախտա-  
գիտութեանը արժանի եղած կ'ըլլաս :  
Վէկը նուաստ ծնունդ ունենալովը  
անարդելի ըլլար , թէ որ ինքը զինքը  
ազնուացընէ , և ետեւէն եկող իր սե-

ըունդին աղնուական անուն ձգէ , և իր  
պարծանքը ըլլայ : Եսիկայ՝ աղնուակա-  
նի մը իր աղնուականութիւնը պահե-  
լէն աւելի արժանաւորութիւն ունի :

Եզդ մը իր փառքէն իյնայ իր պա-  
տիւը կորսնցընէ նէ , ասոր պատճառ  
ըլլող աղդայինքները՝ թէ և մեծանուն  
մարդիկ ըլլան , երանելի կ'ըլլային . թէ  
որ բնաւ անուն չունենային . որովհե-  
տեւ անանկ մարդուն զաւակը անդամ  
իրեն ամօթ կը համարի իր հօրը անու-  
նը կըելու :

Թէ որ քու անհոգութենէդ կամ  
անձնական շահդ փնտըռելէդ աղդդ  
վշտաց ու նեղութեանց հանդիսի նէ ,  
դիտցիր որ վատթարներուն կարգն ես .  
բայց ատկէ առաւել , թէ որ քու կիրքդ  
տեղը տանելու համար աղդդ ոոքի տակ  
տոնես կամ առնել տաս , ու աղդիդ հա-  
մար ներողամիտ ըլլալ , իրեն կողմանէ  
քեզի հասած թշնամանացը համբերել ,  
թէ միստոկղէսի պէս՝ լորի , բայց մտիկ ընէ  
ըսել չի գիտնաս , ու վրէմխնդիր ըլ-  
լալու համար աղդիդ դէմելլաս կամ  
ելլալ տաս , քու նախնեացդ դամբա-  
րանները քակես , անսնց նշխարքը հօվի  
և հուրի տաս , վերջապէս քու աղդա-  
յինքդ խղճալի վիճակի մէջ խօթելու ,  
և անոնց բարօրութիւններելու տեղը՝  
սով , մահ և ուրիշ գէշութիւններ  
գլուխնին հասցընելու հետեւիս նէ ,

գիտցիր որ, քան զվատթարս վատթար  
ես : Կոմիկայ, իր քարեկամները իր ազ-  
գականները՝ իր եղբարքը՝ իր ծնողքը՝  
իր կենդանութիւն առած օդն ու տե-  
ղը ուրանալ մըն է : Կոմիկայ իր ազգը քա-  
րոյականաբար կամ իրապէս սպաննել  
մըն է, որուն չափ վատթարութիւն  
չեմ գիտեր :

Ուրդկային ժողովայն կամ ազգիդ  
մէջէն անհատ մը թէ որ քեզի թշնա-  
մութիւն ընէ նէ, քարոյական պարոք  
մըն է քեզի այն թշնամութեանը դէմ  
թշնամութիւն չի հատուցանել, և  
պէտք ըլլայնէ փախարէն աղէկութիւն  
ընել : Ո՞րչափ եւս առաւել վատու-  
թիւն կ'ըլլայ՝ ազգիդ ապերախտու-  
թիւնը տեսնելով իր թշնամին ըլլալ :  
Ազգդ ի՞նչ որ ալ քեզի ընէ, պէտք է  
որ միշտ զինքը սիրես ու պաշտպանես :

Կզգիդ մէջ գէշութիւն տեսար,  
քեզի պարոք է ազգային օրինաց առջին  
այն գէշութիւնները ամբաստաննելու :  
Չի կրցար անոնք վերցընել, չի կրցար  
համոզել, սպասէ . աւելի առաքինու-  
թիւն կայ քեզի համբերելու կամ մեռ-  
նելու, քան թէ վրդով հանելով կամ  
օտարը ազգայնոցդ դէմ միջնորդ կան-  
չելով նորանոր գէշութեանց պատ-  
ճառ ըլլալու : Կզգդ օտարին մասնե-  
լով ի՞նչ աղէկութիւն սպիտի յուսաս  
ազգիդ, մանաւանդ քեզի համար . ու

ըով յարդ պիտի ունենաս . ազ-  
գայնոցդ քով . բայց ամենքն ալ 'ի հար-  
կէ քեզ դարէ 'ի դար պիտի անիծեն . ո-  
րուն մասնեցիր նէ անորքով . բայց գիտ-  
նաս որ , մասնիչ մարդէ մը աւելի նա-  
խատելի բան չի կայ : Աւստի օտարը  
քուկին մատնութենէդ որչափ մեծա-  
մեծ պատուղ ալ քաղէ նէ , այնչափ իր  
ներսէն քեզ պիտի նախատէ . ու թէ  
որ երեսանց քեզի պատիւ ալ տայ նէ ,  
քեզմէ նորանոր մատնութիներ ակըն-  
կալելուն է , չէ թէ քեզ յարդելուն :

**ՃՇմարիտ ազգասէր մը չէ թէ միւ-**  
**այն իր ազգը բնաւ չի մատներ՝ իրեն**  
**թշնամութիւն չըներ , հապա չի բամ-**  
**բասեր ալ , և վար չի զարներ , մանա-**  
**ւանդ օտարին առջին . որովհետեւ գի-**  
**տէ որ իր ազգին պատիւը իրն է , ա-**  
**նոր պատիւը քիշյընելը իր պատուայն**  
**դպչիլ է . բամբասանաց արժանի բան**  
**մը տեսար ազգիդ մէջ նէ , նայէ որ այն**  
**բանը վերցընես , իրօք և պէտք եղած**  
**տեղը խօսելով , ու չէ թէ լեզուիդ տա-**  
**լով , որով անկար և չնչին մէկը ըլլալդ**  
**կը գիտցընես :**

**Վզգիդ դաղտնիքները պահէ . ասիւ-**  
**կայ չէ թէ միայն քու շահդ է , հա-**  
**պա քու մարդկութեանդ ալ պարտ-**  
**քըն է . մէկը իր բարեկամին կամ թէ**  
**ես առաւել իր հօրը և մօրը դաղտ-**  
**նիքը գայ քեզի զուրցէ նէ , ի՞նչ հա-**

մարում կ'ունենաս իր վրան : Յէ՛ որ  
ան գաղտնեացը մէջէն քեզի հանելու  
օգուտ մը ունիս նէ , այն օգուտը կը  
քաղես , բայց զուրցողը կ'արհամար-  
հես . ու գաղտնիք մըն ալ դուն ու-  
նիս նէ , կ'զգուշանաս այն մարդուն  
զուրցելու , ու իրեն անգամ մըն ալ  
հաւատարմութիւն չես ունենար , ու  
զինքը գէթ պարապ մարդ կը համա-  
րես ու իրաւունք ունիս համարելու :  
Յէ՛ որ ազգիդ գաղտնիքը շահու  
համար օտարին զուրցես նէ , գիտցիր  
որ անկէ քաղած շահդ լրտեսին աւուր-  
չէքն է , որն որ անմեղներու արեան գի-  
նը ըսել է . մարդ հարիւր անգամ ինք  
իր բոլոր ընտանեօքը մեռնիլ ուզելու  
է , քան թէ լրտեսել , ու անոր աւուր-  
չէքովը ապրիլ :

## ԳԼՈՒԽ Զ.

## ՅԱՎԱԴՍ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՐՏՈՒՑ

Ի՞նչՊէս ըսուեցաւ , Աստուած մեզի  
ստեղծեց և մեզի վախճան մը ցու-  
ցուց , և առ վախճանին հասնելու  
համար կարողութիւններ տուաւ մե-  
զի : Ուստի առջի պարտականութիւն-  
նիս է , առ կարողութիւնները գոր-  
ծածելուն կերպը սորվիլ :

Կարողութիւն ըսածնիս՝ պինդ առաջ մաքին կարողութիւններն են, և ասոնք ագլիսաւորապէս՝ զգալիմանալ և կամելնիս է : Արարիչը մեր կամքը աղատ սաեղձեց, որ կարենանք անով բարի գործել և չարէն փախչիլ: Ուրեմն պէտք է որ կամքերնիս աղատ մընայ, աշխարհի բաղձանացը ու մարմնական հեշտութեանց գերին ըլլայ: Ո՞ւր կամքին՝ միայն խելքն ու իմացականութիւնը պիտի իշխէ:

Ուստի իմացականութիւննիս ալ պէտք է որ՝ միշտ իր պաշտօնը սորվելու ետեւէ ըլլայ, ու իր նպաստիկը բնաւ չի մոռնայ: Իր նպաստիկին հառնելու համար, թէ առ Արտուած՝ թէ իր նմաններուն ունեցած պարտքերը մըտմըտայ. այսինքն միշտ ճշմարտութիւն վընտըռէ, և սիալէն դժուշտնայ:

Այս ճշմարտութիւնները ճանչնալու համար, բնական ու գերբնական բաններու վրայ հմտութիւն ունենալու է, որով ինչ որ իրեն ըսեն նէ՝ մեկէն չի հաւատոայ, հապաքննեն, նայի. վասն զի ինքը իրմէն պիտի հարցըվի:

Ասանկ ալ մեր զգացողական զօրութիւնը պէտք է որ կըթենք: Օ գայտքանաց պաշտօնը՝ մեր մարմնայն պէտք եղածները մեզի գիտցընելէ: Խելքերնիս պէտք է որ անոնց ամեն գիտցու-

ցածը կշռէ , ու զգայարանքներն ուստի  
անխորհուրդ բաղձանքներուն դէմ  
կենայ :

Երկրորդ՝ մեր մարմնական պարտ-  
քերը գիտնալու ենք . Օառայ մը իր  
տիրոջը ինչ է նէ , մարմինն ալ հոգ-  
ւոյն այնպէս է : Վէկին նպատակը մշ-  
կալին ալ է : Ընորհալին կ'ըսէ որ ,  
“ Ա աշխարհքը իշեան մըն է , և մենք  
ալ ճանապարհորդ ” : Վեր ճանապար-  
հորդութիւնը անվեսս շարունակելու  
և անմոլոր մեր տեղը հանելու համար ,  
պէտք է որ մեղի հոն տանելու միջոցը ,  
այսինքն մարմիննիս այնպէս մը կրթենք  
որ , մէկ կողմը կամ միւս կողմը չի խո-  
տորի . միանգամայն ալ իր բնական  
պէտքերը պէտք է որ չի մռոնանք . իր  
ազատութիւնը անթերի պահենք . զուր  
տեղը զինքը չի չարչարենք և կեանքեր-  
նիս չի վերցընենք :

Վհճնասպանութիւնը չէ թէ միայն  
բարյական յիմարութիւն մըն է , հա-  
պա իրապէս գողութիւն ալ է : Վար-  
միննիս աւանդ մըն է մեղի , ու չէ թէ  
պարգև : Վարմինը քուկին ինչքդ չէ ,  
հապաքեղի յանձնուած բան մըն է՝ բո-  
րի գործ մը գործելու կամ պարտք մը  
կատարելու համար : Ծսել է որ , Վատ-  
ուած քեղի մարմին տուեր է նէ , մի մի-  
այն քեղի համար չէ , հապա ազգական-  
ներուդ , բարեկամներուդ , ազգիդ ,

բոլոր ազգի մարդկան, և վերջապէս  
իրեն համար ալ է :

Կեանքըդ բառնալը, Աստուած ա-  
նիկայ քեզի տարուն համար զինքը ամ-  
բաստանել մըն է . կամ թէ իր կամքին  
դէմ գալով, քուկին կամքըդ ընելու  
Աստուած պարտաւորել մըն է :

Կեանքըդ բառնալովըդ, բոլոր ազ-  
գականներուդ բարեկամներուդ և քե-  
զի սիրողներուն տրտմութեանը և սու-  
գին պատճառ կ'ըլլաս, ազգդ ալ իր  
մէկ անդամէն զրկած կ'ըլլաս :

Թէ և ինքըզինքըդ անօգուտ մէ-  
կը տեսնաս, թէ և ազգիդ բեռ մը-  
ու քեզի տեսնազներուն խեղճութեան  
տեսարան մը ըլլալդ գիտնաս, ինքը-  
զինքդ մեռցընելու իրաւունք չունիս :  
Դուն Աստուծմէ ազէկ մի գիտես .  
յաւիտենական բարւոյն հասնելու հա-  
մար դուն քու կեանքըդ գործածելու  
տեղը, ինչ ամբարտաւանութի կ'ըլլայ  
քեզի, թէ որ բռնես Աստուծոյ պար-  
գեւը՝ քեզմէ չուզած, իրեն դարձը-  
նես : Ինչու ինքըզինքդ կը մեռցընես :  
Դիտե՞ս՝ տարիէ մը շաբաթէ մը կամ  
վայրկեանէ մը ետքը ինչ ըլլալիքը : Կա-  
րելի չէ մի որ քու նեղութիւններըդ  
կերպով մը վերնան, դժբաղդութիւ-  
նըդ բարօրութեան, հիւանդութիւ-  
նըդ առողջութեան դառնայ :

Տանի մըն ալ ինքըզինքըդ կարող

չես կարծեր : Դիտես թէ պառկած  
տեղըդ՝ կամ դոնէն դուրս ելալու  
ժամանակըդ մէկուն չի պիտի հանդի-  
պիս միսիթարելու կամ ձեռքէն բըռ-  
նելու . կամ գէշութեան մը արգելք  
չի պիտի ըլլաս , կամ թէ գէշի մը ձեռ-  
քէ անմեզմը չի պիտի ազատես : Դի-  
տես ասիկայ ու կրնան գիտնալ : Ձէ  
մի որ անկարելի բաները անգամ ա-  
մեն օր աչքվընուս առջին կարելի կ'ըւ-  
լան կոր :

Թէ և բոլորովին յցուըդ կտրելու  
վիճակի մէջ ըլլաս , թէ և բոլոր դուռու-  
ները գոցուած , աշխարհք միժնցած ,  
նեղութիւնները վիշտերը ու անտա-  
նելի տառապանքները չորս կողմըդ ա-  
ռած ըլլան , ի՞նչ յիմարութիւն կ'ըւ-  
լայ քեզի , թէ որ կեանքըդ , որ իբր  
գործիք քեզի տրուեցաւ յաւիտենա-  
կան երջանկութիւնը ձեռք անցընե-  
լու համար , դուն այն գործիքը կոր-  
որնցընել ուզես և յուսալու աղէ կու-  
թեանդ տեղ յաւիտենական դատա-  
պարտութեան տակ իյնաս :

Վարդըս մի միայն աս մտմըտալով ,  
պէտք էր որ զինքը սպաննելու խոր-  
հուրդը մոռնար , ու իր փորդ խօթե-  
լու դանակը մէկ դի նետէր : Իայց  
թէ որ անկէ ետքն ալ՝ քանի մը ժա-  
մու , քանի մը վայրկենի նեղութեանցը  
չի կրնալ համբերել միշտ ինքըլիքդ

մեռցընել ուղես նէ՝ ալ մի սպասեր ,  
մեռիր : Դուն անշահ վատ մըն ես ,  
ու մարդոց մէջ տեղ չունիս :

Վարմիննիս միայն մեր կամօքը յայտ-  
նի կերպով սպաննելնիս չէ , հապա որկ-  
րամոլութեամբ՝ ու անբարեխառնու-  
թեամբ ալ անոր մահուանը տղատճառ  
կրնանք ըլլալ : Ես՝ թէպէտ առջինին  
շափ մեղք չէ , բայց միշտ բարոյական  
պակսութիւն է . որովհետեւ Կստուած-  
քեզի խելք տուեր է որ , քեզի վնասա-  
կար բաները Ճանչնաս ու չընես : Եւս  
առաւել մեղք է , թէ որ գիտնալովդ  
անմիտ կրից ու ունայն յօժարութեանց  
ծառայես , ինքըզինքըդ չի զսպես , կամ  
մարմինըդ զուր տեղը վտանգի մէջ  
խօթես :

Վեր կեանքը վտանգի մէջ դնելու  
մարմիննիս մահուան մատնելը ա՛ն ա-  
տենը միայն ներելի է . երբոր պարտք  
մը կատարել կամ աղէկութիւն մը ը-  
նել պէտք ըլլայ նէ :

Աւրիշ բարոյական պակսութի մըն  
ալ կայոր , գրեթէ անձնասպանութեան  
շափ մեղք է . այն է բարոյական մահը ,  
այսինքն մեր բարոյական աղատութիւ-  
նը գրաւելլ : Վարդս՝ աղատ կը ծնի ու  
մինչեւ ետքը իր ամեն մասունքներու-  
վը պէտք է որ աղատ կենայ :



2013



